



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/104/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

10 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 10-ին քննելով Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչ՝ Սմբատ Արտավազի Սմբատյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ, հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/104/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով

սահմանված կարգով Սմբատ Սմբատյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացնելով հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝

- 1) Սմբատ Սմբատյանը 2023 թվականի հոկտեմբերի 4-ին հիփոթեքային վարկի միջոցով ձեռք է բերել ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 129 շենքի 22 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 23,200,000 ՀՀ դրամով (կանխավճար՝ 2,320,000 ՀՀ դրամ), մինչդեռ Հայտարարագրում ստացված վարկը որպես եկամուտ չի հայտարարագրել:
- 2) Հայտարարագրի «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում Սմբատ Սմբատյանը հայտարարագրել է 2,792,100 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մնացորդը, սակայն Հայտարարագրում ստացված վարկը որպես եկամուտ չի հայտարարագրվել:
- 3) 2023 թվականի սկզբում Սմբատ Սմբատյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 373,252 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում՝ 726,629 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն:
- 4) Հայտարարագրի «Բ.6.5. Կանխիկ դրամ» բաժնում Սմբատ Սմբատյանը հայտարարագրել է 400,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ 2022 թվականի տարեկան հայտարարագրում տվյալ տարվա վերջում կանխիկ դրամական միջոցներ չի հայտարարագրել: Առկա է անհամապատասխանություն 2022 թվականի տարեկան հայտարարագրի տարեվերջին և 2023 թվականի տարեկան հայտարարագրի տարեսկզբին հայտարարագրված կանխիկ դրամական միջոցների միջև:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մարտի 26-ին Սմբատ Սմբատյանին հասցեագրել է թիվ

01/1220-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11:00-ին գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Սմբատ Սմբատյանը պատշաճ ծանուցվել է:

1.3 2025 թվականի մարտի 27-ին Սմբատ Սմբատյանի կողմից ներկայացվել է պարզաբանում:

1.4 2025 թվականի ապրիլի 1-ին պատշաճ ծանուցված Սմբատ Սմբատյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 43/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 3-ին Սմբատ Սմբատյանին հասցեագրել է թիվ 01/1364-2025՝ գործի քննությունը հետաձգելու և վերջինիս կողմից իր բանկային հաշվի վերաբերյալ քաղվածք տրամադրելու համար, որի վերաբերյալ Սմբատ Սմբատյանը պատշաճ ծանուցվել է:

1.6 2025 թվականի ապրիլի 4-ին Սմբատ Սմբատյանը գրավոր ներկայացրել է իր բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածքները:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Սմբատ Սմբատյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սմբատ Սմբատյանի կողմից 2025 թվականի ապրիլի 1-ին Հանձնաժողովին ներկայացրել է գրավոր պարզաբանում, որով հայտնել է, որ Հայտարարագրում իր կողմից նշվել է հիփոթեքային վարկի միջոցով ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 129 շենքի 22 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 23,200,000 ՀՀ դրամով ձեռք

բերելու հանգամանքը, Հայտարարագրի «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է 2,792,100 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մնացորդը, որպիսի պայմաններում ակնհայտ է դառնում, որ վերջինս որևէ միտում չի ունեցել եկամուտը չհայտարարագրվելու կամ թաքցնելու, տեղի ունեցածը տեխնիկական վրիպակ է, որը պայմանավորված է Հայտարարագրի լրացման կարգին ոչ լիարժեք տիրապետելու հանգամանքին:

Բանկային հաշվի մնացորդը չհայտարարագրվելու և կանխիկ դրամի անհամապատասխանության վերաբերյալ հայտնել է, որ դրանք գոյացել են իր դեկտեմբեր ամսվա աշխատավարձերից, ինչպես նաև պարգևավճարներից՝ նշելով, որ ինչպես աշխատավարձը, այնպես էլ պարգևավճարները հայտարարագրված են, հետևաբար մտածել է, որ այդ գումարներն արդեն իսկ հայտարարագրված են և որևէ միտում չի ունեցել եկամուտը չհայտարարագրվելու կամ թաքցնելու, տեղի ունեցածը տեխնիկական վրիպակ է, որը պայմանավորված է Հայտարարագրի լրացման կարգին ոչ լիարժեք տիրապետելու հանգամանքին:

Սմբատ Սմբատյանը 2025 թվականին ապրիլի 4-ին գրավոր ներկայացրել է իր բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածքները:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/104/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչ Սմբատ Արտավազդի Սմբատյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 2023 թվականի հոկտեմբերի 4-ին հիփոթեքային վարկի միջոցով Սմբատ Սմբատյանի կողմից ձեռք բերված ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան

թաղամաս, 129 շենքի 22 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 23,200,000 ՀՀ դրամով, Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրվել է նշված վարկի և անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ, սակայն Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ստացված վարկը որպես եկամուտ հայտարարագրված չէ:

3.3 Հայտարարագրի «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում Սմբատ Սմբատյանը հայտարարագրել է 2,792,100 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մնացորդը, սակայն այս դեպքում ևս Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ստացված վարկը որպես եկամուտ հայտարարագրված չէ:

3.4 2023 թվականի սկզբում Սմբատ Սմբատյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 373,252 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում՝ 726,629 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում, վերջինիս բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն:

3.5 2023 թվականի տարեկան Հայտարարագրի «Բ.6.5. Կանխիկ դրամ» բաժնում տարեսկզբի դրությամբ Սմբատ Սմբատյանը հայտարարագրել է 400,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ 2022 թվականի տարեկան հայտարարագրում տվյալ տարվա վերջում կանխիկ դրամական միջոցներ հայտարարագրված չեն: Առկա է անհամապատասխանություն 2022 թվականի տարեկան հայտարարագրի տարեվերջին և 2023 թվականի տարեկան հայտարարագրի տարեսկզբին հայտարարագրված կանխիկ դրամական միջոցների միջև:

3.6 Սմբատ Սմբատյանի կողմից ներկայացված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 0005 քարտային հաշվի քաղվածքի տվյալների համաձայն՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ սկզբնական մնացորդը նշված է 373,252 ՀՀ դրամ, իսկ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ վերջնական հասանելի մնացորդը՝ 578 ՀՀ դրամ: «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի թիվ 4 հաշվի քաղվածքի տվյալների համաձայն՝ 2023 թվականի վերջնական հասանելի մնացորդը նշված է 626,009 ՀՀ դրամ:

3.7 Կենտրոնական բանկի կողմից տրամադրած տեղեկության հայաձայն՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում Սմբատ Սմբատյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի վերջի դրությամբ կազմել է 100,629 ՀՀ դրամ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը) հոդվածի 4-րդ մասի 3.1 կետի համաձայն՝ հայտարարագրում որպես եկամուտ ներառվում է նաև հայտարարատուի կողմից ստացված վարկերը (այդ թվում՝ հիպոտեկային):

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչ Սմբատ Արտավազդի Սմբատյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի ապրիլի 24-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, այն է՝

1. 2023 թվականի հոկտեմբերի 4-ին հիփոթեքային վարկի միջոցով Սմբատ Սմբատյանի կողմից ձեռք բերված ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 129 շենքի 22 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 23,200,000 ՀՀ դրամով, Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրվել է նշված վարկի և անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ, սակայն Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ստացված վարկը որպես եկամուտ հայտարարագրված չէ:

2. Հայտարարագրի «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում Սմբատ Սմբատյանը հայտարարագրել է 2,792,100 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մնացորդը, սակայն այս դեպքում ևս Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ստացված վարկը որպես եկամուտ հայտարարագրված չէ:

3. 2023 թվականի սկզբում Սմբատ Սմբատյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 373,252 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում՝ 726,629 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում, վերջինիս բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն:

4. 2023 թվականի տարեկան Հայտարարագրի «Բ.6.5. Կանխիկ դրամ» բաժնում Սմբատ Սմբատյանի հայտարարագրել է 400,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ 2022 թվականի տարեկան հայտարարագրում տվյալ տարվա վերջում կանխիկ դրամական միջոցներ հայտարարագրված չեն: Առկա է անհամապատասխանություն 2022 թվականի տարեկան հայտարարագրի տարեվերջին և 2023 թվականի տարեկան հայտարարագրի տարեսկզբին հայտարարագրված կանխիկ դրամական միջոցների միջև:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

1-ին կետում նշված խախտման առնչությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ Սմբատ Սմբատյանը Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում որպես եկամուտ չի հայտարարագրել ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 129 շենքի 22 հասցեում գտնվող անշարժ գույքի համար ստացված հիփոթեքային վարկի գումարը, մինչդեռ նույն Հայտարարագրի Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է նույն անշարժ գույքի գնման համար ստացված հիփոթեքային վարկի մնացորդը՝ 19,862,000 ՀՀ դրամի չափով, որով, ըստ էության բացահայտվել է նշված անշարժ գույքի գնման համար հիփոթեքային վարկ ստացած լինելու տվյալը, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը. և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

2-րդ կետի առնչությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ Սմբատ Սմբատյանը Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում որպես եկամուտ չի հայտարարագրել 2023 թվականի ընթացքում ստացած 2,820,000 ՀՀ դրամի չափով վարկը, մինչդեռ նույն Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է վարկի մնացորդ՝ 2,792,100 ՀՀ դրամի չափով, որով, ըստ էության բացահայտվել է նշված վարկը ստացած լինելու տվյալը: Հաշվի առնելով վերոնշյալը և ստացված վարկի գումարի և վարկի մնացորդի միջև տարբերության չափը՝ 27,900 ՀՀ դրամ, Հանձնաժողովը արձանագրում է, որ Սմբատ Սմբատյանի կողմից թույլ տրված նշված խախտումը ունի նվազ նշանակություն:

3-րդ կետի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2023 թվականի սկզբում Սմբատ Սմբատյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 373,252 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում՝ 726,629 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում բանկային հաշվի

մնացորդների վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն: Տվյալ դեպքում Հանձնաժողովը արձանագրում է, որ տարվա սկզբին չհայտարարագրված գումարի չափը չի գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը, իսկ տարվա վերջին չհայտարարագրված գումարը, ըստ Սմբատ Սմբատյանի կողմից ներկայացված պարզաբանման և գործում առկա բանկային հաշիվների քաղվածքների, գոյացել է բացառապես խախտում կատարած անձի դեկտեմբեր ամսին ստացված աշխատավարձից և պարգևավճարից: Նշված հանգամանքները փաստում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

4-րդ կետի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Սմբատ Սմբատյանն իր պարզաբանումներով նշել է, որ 2023 թվականի տարեկզբին իր մոտ առկա է եղել 400,000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ինչն ինքնին վկայում է, որ այդ գումարն իր մոտ եղել է նաև 2022 թվականի տարեվերջին: Նշվածից հետևում է, որ Սմբատ Սմբատյանի կողմից սխալ տվյալը ներկայացվել է ոչ թե 2023 թվականի, այլ պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում: Հետևաբար Հանձնաժողովը արձանագրում է, որ այս մասով վարչական իրավախախտման դեպքը բացակայում է, իսկ 2022 թվականի տարեկան Հայտարարագրում առկա խախտման համար Սմբատ Սմբատյանը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, հիմք ընդունելով այն, որ անցել են դրա համար նախատեսված վաղեմության ժամկետները:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սմբատ Արտավազդի Սմբատյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սմբատ Արտավազդի Սմբատյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Սմբատ Արտավազդի Սմբատյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ